

Էն սհաթին էկաւ, քինաւ. էկաւ քինաւ, տեսաւ, որ Գաւիթ վեար ձիուն խեծուկ ը. խեծուկ ը, համայ Գաւթի երկու ոտ ընկած կարասը կարը մէջ, ինչըն կէնի, տիւս չի կեայ:

Գիշերուան կիսուն վի թուաւ, ակախաւ, էսաց.—Անիկ, իլի՛ ճըրագ կպու, իս տ'երթամ, Գաւթի նեղ տեղն ի:

Էն սհաթին էլաւ, ճրագ կպուց:

Չէնով-Յեովան էլաւ, առից ճրագ, կինաց ձիանցտարու թաւլէն. յառաջ էսաց.—Սիւ ձին, էսաց, զը¹⁾ չուր ի²⁾ կ'խասըցիս Գաւթը լէջը վերայ:

Էսաց.—Աեախ ընց կեախ³⁾:

Էսաց.—Քիւ բերան կուտրէր, ընցկուն չ'ասէր:

Աինաց մատ կարմիր ձին, էսաց.—Աարմիր ձին, չուր յի⁴⁾ զը կ'խասըցիս Գաւթը լէշին:

Էսաց.—Չուր վաղ կէսօրին:

Էսաց.—Քիւ բերան կուտրէր, ընցկուն չ'ասէր:

Աինաց մատ բող ձին, էսաց.—Բող ձին, չուր յի⁴⁾ զը կ'խասըցիս Գաւթը լէշին:

Էսաց.—Չուր աղօթրան բացուը:

Էլաւ, զբող ձին քեշից տիւս, խեծաւ:

Էսաց.—Քիւ աչքիր խփը:

Աչքիր խփից:

Մէկն էլ էսաց.—Գէ բաց:

Ինչ աչքիր էբաց, տեսաւ վեար Գաւթին կանգնիր ի. կանչից.—Գաւթի, Գաւթի:

Էսաց. Հրամմէ:

Էսաց.—Տիւ ինչի ինկիր իս կապ:

Էսաց.—Չըմ գիտը:

Էսաց.—Քիւ բերան կուտրէր, էսաց, յիշա իմ խացն ու գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրազին վեար Գաւթը աջ թիւին:

1) Ինձ: 2) Երբ: 3) Մինչև վաղն այս ժամանակ: 4) Ինձ: